

ԻՏԱԼԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ «ԲԱԶՄԱՎԷՊ» ՀԱՆԴԷՄԻ ԷԶԵՐՈՒՄ

ԺԸ. դարի 80-ական թուականներից մինչև ԺԹ. դարի 70-ական թուականները Իտալիայի պատմութեանը բնորոշ են Աւստրիայի եւ Բուրբոնների լծի թօթափման դէմ իտալացիների մղած հերոսական պայքարը եւ մաքառումները: Այդ շրջանում պայքար էր մղում երկրի ազատութեան, անկախութեան ու միաւորման համար, եւ ժամանակաշրջանը ստացաւ Ռիսորջիմենտոյ (վերածնունդ) անուանումը:

ԺԹ. դարի սկզբին՝ 1815 թ. Վիեննայի խորհրդաժողովի ժամանակ, պատմական ճակատագրի բերումով, Իտալիան նոյնպէս մասնատուեց (բաժանուելով ութ մասի) եւ իտալացիներն ու հաշիւը դարձան բախտակիցներ: Երկու ժողովուրդների պատմական ճակատագրերի միջեւ որոշակի նմանութիւններ եւ ընդհանրութիւններ էին առաջանում:

«Բազմավէյ» հանդէսը տպագրւում էր Վենետիկում 1843 թուականից մինչև օրս: Պարբերականի հիմնադիր խմբագիրներն են եղել հայ հասարակական նշանաւոր գործիչներ, գիտական մտքի կարկառուն դէմքեր Գաբրիէլ Այվազովսկին (1843-1848), Ղեւոնդ Ալիշանը (1849-1851), Հմայեակ Պապիկեանը (1856-1857, 1876-1878), 1924թ. Ղեւոնդ Տայեանը եւ ուրիշներ:

Հանդէսը հիմնականում ունեցել է հայագիտական ուղղուածութիւն, բայց խմբագիրները գիտակցելով ժամանակի պահանջները ընդարձակել են նրա նիւթերի տպագրութեան ցանկը, դժուրանով հետաքրքրութիւն սերմանելով ընթերցողների մէջ: «Բազմավէյի» խմբագիրները տպագրել են նիւթեր «աշխարհիկ թեմաներով», ծանօթացրել են իրենց ընթերցողներին եւրոպական քաղաքական գործիչների կեանքին ու գործունէութեանը, տեղադրել են եւրոպական եւ ամերիկեան տարբեր ազգերի աշխարհ-

հագրութիւնը, այդ երկրների տեղադիրքը, ներկայացնել «բնաբանական» եւ տնտեսագիտական արժէքաւոր նիւթեր:

Հանդէսն ունեցել է «Հայկական», «Ուսումնական», «Բանասիրական», «Բարոյական», «Աշխարհագրական», «Քաղաքագիտական», «Կենսագրական» եւ «Զանազան գիտելիքներ» բաժինները:

Մխիթարեանները ականատես էին լինում իտալական ազգային-ազատագրական շարժմանը եւ այդ իմաստով էլ նրանց յայտնած տեսակէտները սկզբնաղբիւրի արժէք ունէին: Նրանք երբեմն ուղղակիօրէն չէին կարող արձագանքել այդ դէպքերին ելնելով իրենց ազգային-պահպանողական հայեցակարգից: Պէտք է նկատել նաեւ, որ իտալական ազգային-ազատագրական շարժման ղեկավարներից կոմս Կաւուրի, Զուզեպպէ Մաձձինիի եւ Զուզեպպէ Գարիբալդիի մասին առանձին ուսումնասիրութիւններ եւ յօդուածներ չեն տպագրուել հանդէսում, բայց յարակից նիւթերի տպագրումից պարզուում է այդ հերոսների ներկայութիւնը ամէնուրեք:

«Բազմավէպի» առաքելութիւնը կայանում է նրանում, որ այնտեղ տպագրուող իտալական ազգային-ազատագրական բազմազան նիւթերին Մխիթարեան հայրերն ինքնուրոյն գնահատականներ են տուել, ներկայացնելով շարժման տարբեր մասնակիցներին, նաեւ եւրոպացի եւ ամերիկացի անհատներին՝ Նապոլէոն Ա-ին, Նապոլէոն Գ-ին, Օլիվեր Կրոմուէլին եւ ուրիշներին: Այս ուժեղ անհատներին ներկայացնելով իր ընթերցողների դատին, դրանց միջոցով դատապարտելով յեղափոխութիւնները, որոնց արդիւնքում օրինաւոր (լեգիտիմ-Հ.Ա.) կարգերը տապալուեցին այդ երկրներում, ստեղծուեցին անօրէն կարգեր, նրանք հայ ժողովրդին զգուշացնում էին հեռու մնալ յեղափոխութիւններից եւ նման իրավիճակներից, քանի որ իրենք գտնուում էին Հայաստանից հեռու երկրում՝ Իտալիայում, եւ չէին կարող օգտակար լինել ժողովրդին: Աշխատում էին ցոյց տալ, որ պէտք է համընթաց ընթանալ եւրոպացիների գծած ուղիով:

Ռիսորջիմենտոյի ժամանակաշրջանի նշանաւոր գրողներից էր Սիլվիոյ Փելլիկոն (1789-1854): Նրա «Բանտը իմ» պոեմը, գրուել էր աւստրիական բանտում (սկզբում Միլանի Սանտա Մարկերիդ, իսկ յետոյ 1822թ. աւստրիական Շպիլբերգում) նստած ժակերիդ, նկարագրուում են Իտալիայի հայրենասէրները, մանակ: Այդտեղ նկարագրուում են Իտալիայի հայրենասէրները, որոնք հալածուում էին աւստրիական բանտերում եւ տանջանքի

էին ենթարկուած նրանց կողմից: Նա վենետիկում դարձաւ կարժոնարիական խմբակցութեան անդամ: Սիլվիոյ Փելլիկոն այդ ընթացքում խմբագրում էր «Կոնչիյատորէ» հանդէսը: 1820թ. ձերբակալուեց միւս ազգային գործիչների ու հայրենասէրների հետ: 1821թ. օգոստոսի 10-ին նրա նկատմամբ մահուան դատավճիռ կայացրին, բայց շուտով փոխարինեցին ցմահ բանտարկութեան¹: «Բազմավէպը» այս առիթով ներկայացնում է Սիլվիոյ Փելլիկոյի կեանքի դժուարին ուղին:

1863թ. Սիլվիոյ Փելլիկոյի ծննդավայրում, ի յիշատակ մեծ հայրենասէրի նկատմամբ ունեցած յարգանքի, Իտալիայի Սալուցցոյ փոքրիկ քաղաքում արձան է կանգնեցուել: Եւ այս կապակցութեամբ «Բազմավէպը» գրում է. «Տարակոյս չկայ, որ Իտալիոյ ի մի ազգ ու տէրութիւն ձեւանալուն արդիւնքը՝ գլխաւորապէս իր քաջասիրտ հայրենասիրաց անձնանուէր գոհորութեան ընծայելու է. որոնց կարգէն է նաեւ իմաստասէրն ու համբաւաւորն Սիլվիոյ Բելլիֆոյ, ծնեալ Բիւտնոնդի Սալուցցոյ ֆադիին մէջ»²: Այնուհետեւ հանդէսը նկարագրում է, որ աշխատել է իր գրուածքներում վառ պահել «իր հայրենակցաց սրբտիւն մէջ» ընտանեաց, հայրենեաց ու մարդկութեան սէրը» (նոյն տեղում, էջ 280):

Հանդէսը համեմատութեան եզրեր է փնտրում հին աշխարհի նշանաւոր պատմաբան Պլուտարքոսի, եւ միւս կողմից Փելլիկոյի եւ Մանծոնիի միջեւ, վերջիններիս՝ «մատենագրական գործոց ու կրօնական զգածմանց նմանութեան համար»:

Դիւցազուն հայրենասէրի՝ Սիլվիոյ Փելլիկոյի յիշատակը յարգելու համար իր հայրենի քաղաքում տեղի ունեցաւ արձանի բացումը (քանդակի հեղինակն է՝ Սիմոնեդզան), որին ժամանել էին մարդիկ Իտալիայի տարբեր մասերից եւ որը ո՛չ միայն տեղական նշանակութիւն ունէր, այլեւ համաիտալական հաւաք էր:

Միլիթարեանները բուռն հետաքրքրութիւն են ցուցաբերել նաեւ մեծ անգլիացի գրող Զորջ Գորդոն Բայրոնի (1788-1824) անձի եւ ստեղծագործութեան նկատմամբ: Դա բացատրւում էր այն բանով, որ Զորջ Բայրոնը եղել է նրանց մօտ՝ 1816-1818թթ., եւ ուսանել էր հայերէն: Միլիթարեան հայրերից Յարութիւն Աւգե-

¹ St'а История Италии, М., 1970, том 2, ст.499:

² «Բազմավէպ», Վենետիկ, Ա. Ղազար, 1875, էջ 279: Այսուհետեւ «Բազմավէպ» հանդէսից արուող մէջբերումները կը նշուեն բնագրին կից, միայն ցոյց տալով հրատարակութեան տարեթիւը եւ էջերը:

րեանի ուսուցչապետութեամբ, վերջինս նշանաւոր հայագէտ Մկրտիչ Աւգերեանի եղբայրն էր:

Ջորջ Բայրոնը Վենետիկի Միխիթարեանների մօտ այնքան լաւ էր սովորել հայերէն, որ մասնակցել ու օգնել էր իր ուսուցչին՝ Յարութիւն Աւգերեանին հայ-անգլերէն եւ անգլո-հայերէն քերականական դասագրքերի, ինչպէս եւ անգլո-հայերէն բառարաններ կազմելու աշխատանքին:

Ջորջ Բայրոնի կենսագրականը «Լորտ Պայրըն» վերնագրով տպագրուել է «Բազմավէպում» դեռեւս 1846թ. թիւ 19 համարում: 1866թ. հանդէսում տպագրուում է նաեւ Ջորջ Բայրոնի մասին ֆրանսիացի նշանաւոր քաղաքական գործիչ եւ բանաստեղծ Լամարթինի «Մարդն առ Լորտ Պայրըն» խորագրով բանաստեղծական ձօնը (թարգմ. Հ. Սամ. Կայսերեան): Նկատենք, որ ֆրանսիացի գրողն նոյնպէս եղել է Ս. Ղազարում:

1924թ. (Ապրիլ-թիւ 4) «Բազմավէպի» ամբողջ համարը, բացառութեամբ առաջին նիւթի, որը վերաբերում է «Միխիթար ու իր գործը» (մահուան 175-րդ տարեդարձին առթիւ), միւս բոլոր յօդուածները նուիրուել են Ջորջ Բայրոնի մահուան 100-ամեայ տարելիցին: Բաւական է միայն յիշատակել «Պսակ մը Պայրընի շիրիմին» խմբագրականը, բայրոնագէտ Չ. Ռ. Գամմելի «Միխիթարեան հայերուն ի Վենետիկ» քերթուածքը, աշխարհահռչակ ծովանկարիչ Յովհաննէս Այվազովսկու «Մուտք Լորտ Պայրընի Ի Ս. Ղազար» գեղանկարի լուսանկարը³, Ռ. Վ. Անդերսոնի «Բայրոն», Հ. Եղիա. Փէչիկեանի «Լորտ Պայրըն Հայոց մէջ» յօդուածները եւ այլն:

Բայրոնագէտ Չ. Գամմելի Հ. Ղեւոնդ Տայեանին («Բազմավէպի» գլխաւոր խմբագրին - Հ.Ա.) ուղղուած ուղերձում նկատուում էր, որ ինքը՝ 1922-ի Հոգեգալստեան օրն այցելելով Ս. Ղազար կղզին, խորապէս յուզուել է այն հանգամանքից, որը ցուցաբերել են նրա նկատմամբ Միխիթարեան հայերը, եւ իբրեւ յարգանքի նշան պահել են Լորտ Պայրընի նկարն ու նշխարները: Չ. Գամմելը նկատում է նաեւ, որ Միխիթարեանների մօտ անցկացրած ժամերը Ջորջ Բայրոնի համար «երջանկագոյններն եղան» իր փոթորկոտ կեանքի ընթացքում:

Ուղերձն աւարտուում է յարգանքի եւ երախտագիտութեան խօսքերով հանդէպ Միխիթարեանների կատարած գործը: Տպագրու-

³ Այս գեղանկարի բնօրինակը ցուցադրուեց Երեւանում 2005թ., հայ-իտալական բարեկամութեան օրերին, Հայաստանի ազգային պատկերասրահում:

ւում է նաեւ նոյն հեղինակի՝ Զ. Գամմելի «Մխիթարեան Հայրերուն Ի Վենետիկ» բանաստեղծութիւնը (բնագրից անգլերէնից Հ. Արսէն Ղազիկեանի թարգմ.), որտեղ նոյնպէս նկատուում է վերջինիս գրական վերաբերմունքը Զորջ Բայրոնի եւ Մխիթարեանների հանդէպ:

Հանդէսի նոյն համարում տպագրուել է Ռ. Վ. Անդերսոնի «Բայրոն» խորագրով (անգլերէն) գրաքննադատական յօդուածում, ուր գետեղուել է նաեւ «Պայրեն» (իր սենեկին մէջ Ի Ս. Ղազար), գեղեցիկ լուսանկարը:

«Բագմավէպը» ներկայացնում է իր ընթերցողներին «Պայրենեան ցեղագրութիւնը» (տոհմածառը - Հ. Ա.), որ նրանց ցեղը ծագել է 1488թ. Սըր Զոն Բայրոնից եւ այդ տոհմածառի ճիւղաւորումը, որից յետոյ երեւան է գալիս 1540թ. Սըր Նիկոլաս Բայրոնի անունը, տոհմածիւղը հասցնում է մինչեւ Զորջ Գորդոն Բայրոնի մահը (1824թ. ապրիլը): Հեղինակը տալիս է տոհմածիւղի զարգացումը եւ հասցնում է մինչեւ 1921թ. վերջին սերնդի ներկայացուցչին՝ Աննա Էդվ. Ֆիտցրոյին:

Այդ համարում ներկայացուում է «Լորտ Պայրենի» նամակներն ու օրագրութիւններն ուղղուած Մր. Մըրրէին (թուով 12 նամակ) եւ Մր. Մուրին (2 նամակ) եւ մէջ նամակ (անգլերէն եւ հայերէն) «Առ տիկին»: Այս նամակում Զորջ Բայրոնը Վենետիկի Մխիթարեանների մասին ուշագրաւ մտքեր է յայտնում: Բայրոնը գրում էր. «Այս անձերը քահանաներն են հարստահարուած ազնուական ազգի մը, որ Հրէից եւ Յունաց պէս տարագիր ու գերեվար եղած էր, առանց առաջիններուն պէս կամակոր եւ վերջիններուն պէս ստրուկ դառնալու: Այս ժողովուրդը հարըստացեր է առանց վաշխառութեան, եւ ստացեր է ամէն պատիւներ, զոր գերիները կարող են ստանալ առանց էնդրիկներ քանցեցնելու» (1924, թիւ 4, էջ 126):

«Առ տիկին» նամակում, որ գրուել է Բայրոնի կողմից (17 մայիս 1823-ին) տրուած են բանաստեղծի ռոմանտիկ սէրը, երբ Վենետիկում կնոջից բաժանուելով մի փոքր նուէր է տուել տիկնոջը: Տիկինը փոխադարձաբար պատասխանել է նրան: Նորագոյն գրականութեան մէջ պարզուել է Վենետիկում, Բայրոնին հանդիպած կնոջ անունը, ազգանունը: Ո՞վ էր այդ անձը, որին սիրահարուել էր Բայրոնը: Իտալացի գրողներ Ալեքսանդր Հերմետը եւ Դի Դեզիոն գրում են իրենց հրատարակած «Հայերի Վենետիկը» գրքում. «1819թ. հոկտեմբերեան մի երեկոյ, ամուսնուց չբաւա-

րարուած հրապուրիչ մի կիմ այնուամենայնիւ ձգում է Բայրոնին վեցնետիկ: Բեննոնի վսեմագեղ սրահում բանաստեղծը հանդիպեց ծեր Գուիչիլիոյի կնոջը՝ Թերեզային, որը ռավեմացի կոմս Գամբայի դուստրն էր: Ծնունց անդիմադրելի մի սէր, եւ Բայրոնը հետեւեց Թերեզային մինչեւ Ռավեննա, ապա Պիզա, դարձաւ նրա խանդավառ եղբոր ընկերը, որը նրան ներբաշեց յանդուգն ձեռնարկի մէջ, որն էր քուրբների վտարումը Լեպանտոյից, այն կրկին յոյներին տալու նպատակով»⁴:

«Համառօտ կենսագրական գիծեր Լորտ Պայրընի» յօդուածում (հեղ. Հ.Դ.Ս.-ն) նշում է նրա կեանքի մանրամասները, որ Բայրոնը յարել է կարբոնարիական շարժմանը, բայց երբ այդ կուսակցութիւնը պարտուեց 1819-ից նուիրեց հելլենական ազատութեանը: Հանդէսի այս նիւթը շատ պատկերաւոր ներկայացնում է Բայրոնին. «Զօրավար մ'էր առանց բանակի, դիւցազն առանց ակնկալութեանց, զոհ գնաց անհաւանական յաջողութեան դատի մը, որուն նահատակն եղաւ՝ մեռնելով ժամատետեղէ ի Միսսոլունկի Ապրիլ 19-ին, յամին 1824» (1924, էջ 149):

«Լորտ Պայրըն ի Ս. Ղազար» յօդուածում Հ. Ղեւոնդ Տալեանը բարձր գնահատելով «հանճարին» գրում էր. «Զ'ա՞րժեր ուրեմն՝ Մագէլի այն եռանդուն զգացումէն յորդորուած՝ անգա՛մ մ'ալ մեր կողմանէ կրկնել իր վաղեմի առաջարկը, որ «Եթէ կայ տեղ մը ամբողջ Եւրոպայի մէջ, «յետ Լոնտոնի եւ Միսսոլունկիի, ուր հարկ» է որ կանգնուի Պայրընի արձանը, վեցնետիկն է այն» (նոյն տեղում, էջ 139):

Հ. Ղեւոնդ Տալեանը նկարագրում է վեցնետիկը եւ այն միջավայրը, որը Բայրոնի համար ուխտավայր է եղել: Անգլիացի նշանաւոր բանաստեղծն իր հանգիստը անցկացրել է Ս. Ղազար կղզում, ուր առաջին ծանօթութիւնն է հաստատել Յարութիւն Աւգերեանի եւ մէկ ուրիշ Միլիթարեանի՝ Հ. Ղուկաս Ինճիճեանի հետ:

Հ. Եղիա Փէչիկեանը ընդգծում էր Բայրոնի կապերը հայերի հետ. «Արեւմուտփի հանճարներուն մէջ միակն է (Բայրոնը - Հ. Ա.), որ այնքան սէր եւ զմայլամբ եւ մտերիմ յարաբերութիւններ ունեցած է հայուն հետ, այն օրէն՝ երբ ոտք դրաւ փոքրիկ Հայաստանի վրայ - վեցնետիկ լնակին մէջ - այն օրէն

⁴ ԱԼԵՐԱՄՈՅ ՀԵՐՄԵՏ, ԴԻ ԴԵԶԻՈՅ, Հայերի վեցնետիկը, Եր. 2000թ., էջ 248:

գմայլամբին հետ անխզելի կապ մը, միութիւն մը գոյացաւ անոր եւ հայութեան միջեւ» (նոյն տեղում, էջ 157):

«Բազմալէպի» միւս համարում եւս՝ 1924թ. (մայիս - թիւ 5, էջ 173-175) Հ. Ա. Ղազիկեանը Լորտ Պայրընի ստեղծագործութիւններէից թարգմանում է «Եբրայական մեղեդիներ. Ո՛հ լացէք, Յորդանանու ափերուն վրայ, Յեփթայէի աղջիկը, Բաղդասարի տեսիլքը, Կոտորած Սենեքերիմի բանակին» բանաստեղծութիւնները:

«Բազմալէպի» այս համարները նուիրուելով Բայրոնի անմեռ յիշատակին Մխիթարեանները մէկ անգամ եւս շեշտում են հանճարեղ բանաստեղծի ունեցած կապերը Մխիթարեանների, ինչու չէ՞ նաեւ հայութեան հետ, այդ առնչութիւնները, որոնք զեղեցիկ օրինակ էին հայ-անգլիական մշակութային փոխադարձ կապերի մասին:

Նշանաւոր հայագէտ Ղեւոնդ Ալիշանը (1820-1901) Հայաստանից հեռու գտնուելով գրում էր իր հայրենասիրական բանաստեղծութիւնները, որոնք անշուշտ, իտալական ազգային-ազատագրական շարժման ազդեցութիւնն էին կրում: Այդտեղ եւ կար հայրենասիրութիւն, եւ ցաւ ու տառապանք, իր հայրենիքի հանդէպ: Իսկ հայրենիքը բաժանուած լինելով երկու մասի ծանր վիճակում էր, Արեւելեանը Հայաստանը գտնուում էր Պարսկաստանի, իսկ Արեւմտեան Հայաստանը՝ Սուլթանական Թուրքիայի տիրապետութեան տակ:

Ղեւոնդ Ալիշանը գրում էր հայրենիքի պատմական շրջանների պատմութիւնը՝ «Տեղագիր Հայոց մեծաց» (1855), «Շիրակ» (1881), «Սիսուան» (1885), «Այրարատ» (1890), «Սիսական» (1893), «Հայ-Վենետ» (1896) եւ ուրիշ գործեր, որոնք փառք ու պատիւ բերեցին նրան:

Ղեւոնդ Ալիշանը «Բա՛մ փորոտանը», «Հրազդան գետակ իմ հայրենի», «Մասիսու սարերն» ժողովրդի մօտ ինչ խօսք արթնացնում էր հին Հայաստանի նկատմամբ յիշողութիւններ, ու մանտիկ հայրենասիրական զգացմունքներ, ինչպէս եւ հայրենիքի կորստի պահեր: Փաստօրէն դրանով հայ երիտասարդութեանը կոչ էր անում ազատագրել հայրենիքը, բայց ինչպէս եւ ո՞ւմ նմանութեամբ: Այստեղ ուշագրաւ է, որ Ալիշանի մօտ հայեցակարգ է մշակւում Հայաստան աշխարհը ազատագրել, ինչպէս ժամանակին այդ արեցին իտալացիները՝ ազատագրուեցին բռնակալական լծից, արիւն հեղելով եւ պայքարի գնով: Այս իմաստով

էլ չի կարելի համաձայնուել ակադեմիկոս Արտաշէս Կարինեանի այն մտքին, իբր Ղեւոնդ Ալիշանը իտալական ազատագրական շարժումների ներքոյ «... չի դառնում դեմոկրատ քանաստեղծ կամ ռեվոլյուցիոն իտալիայի քարեկամ»⁵: Ղեւոնդ Ալիշանը իր ամբողջ գործունէութեամբ դեմոկրատ գրող էր: Մեր մի յօդուածում ցոյց ենք տուել, որ անգամ նա գրասենեակային գիտնական չէր, իր գործերը գրելիս աղբիւրագիտական նիւթերը, մեծ մասամբ, հաւաքեց իր ճանապարհորդութիւնների օրերին: 1850-1853 թթ. նա ճանապարհորդելով իտալիայի քաղաքներում, այնուհետեւ այնտեղից անցնում է Վիեննա, Փարիզ եւ Լոնդոն, մօտիկից ծանօթանում է եւրոպական ազգերի քաղաքակրթութիւններին եւ մշակոյթին⁶:

Ղեւոնդ Ալիշանը «Մասիսու սարերն» երկարաշունչ պոեմում երկխօսութեան ձեւով ներկայացնում էր Աւագ եւ Կրտսեր Մասիսների խօսակցութիւնը, որը ի վերջոյ աւարտւում է յօգուտ նահապետի Աւագութեան սկզբունքով, ինչպէս կեանքում Աւագ եւ Կրտսեր եղբայրներն են, այդպէս էլ բնութեան մէջ յիշատակւում է Աւագի եւ Կրտսերի իրար հետ փոխկապակցութեան հարցը: Այս դէպքում առաջնութիւնը տրւում է Մեծ Մասիսին:

Ինչպէս իրաւացիօրէն նկատել է գրականագէտ Արամ Ինճիկեանը այս բանաստեղծութեան առիթով. «Մասիսի հրաքիսային ժայթքման քանաստեղծական պատկերի մէջ Ալիշանը, անշուշտ, դրել է ապստամբութեան, ազատագրական պայքարի գաղափարը, որ, ինչ խօսք իտալական ազգային-ազատագրական շարժման անմիջական ազդեցութեան արգասիքն էր»⁷:

«Հրազդան գետակ իմ հայրենի» բանաստեղծութիւնը Ղեւոնդ Ալիշանի հայրենասիրական պոեզիայի լաւագոյն նմոշներից էր, որը իր բնոյթով շատ հետաքրքրական է: Բանաստեղծութիւնը («Բազմավէպ», 1848, թիւ 17), որը գրուած է 1848 թ. Վենետիկեան յեղափոխութեան ազդեցութեամբ, ուր Հրազդան գետի եւ բնութեան գովքն է անում բանաստեղծը: Ղեւոնդ Ալիշանը մտո-

⁵ ԱՐՏԱՇԷՍ ԿԱՐԻՆԵԱՆ, Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմութեան, Եր. 1960, հ. 2, էջ 192:

⁶ ՏԷՍ ՀՐԱԶԵԱՅ ԱՄՄԱՐԵԱՆ, «Ղեւոնդ Ալիշանի ճանապարհորդական նոթերից», Լրաբեր հասարակական գիտութիւնների, Եր. 2003, թիւ 2:

⁷ ՏԷՍ պրոֆ. Արամ Ինճիկեանի գրած ներածականը Ղեւոնդ Ալիշան, «Նուազներ», Եր., 1957, էջ 10:

վի տեղափոխում է հայրենիք, ցաւի ու կարօտի խօսքեր ասում
Հրազդան գետին.

Հրազդա՛ն, գետակդ իմ հայրենի
Հրազդա՛ն, ջրիկդ իմ անուշիկ,
Ահա թողել գիողն օտարի
Բարգէնս հասել եմ պանդըխտիկ.
Ա՛յ Հրազդան, ա՛յ ջուրք հայրենիք
Ա՛յ ափունք, է՞ր կու լայք լըռիկ⁸:

Բանաստեղծութեան հերոսին՝ Բաբկէնին, գոհացում էի տա-
լիս պանդխտութիւնը, դրան հակադրելով հայրենիքի շքեղ բնու-
թիւնը, քանզի հայրենիքը օտարի լծի տակ էր գտնւում «ան-
ցուղնաց է եղել ամէն» ինչ. «ոչնչացել էր կանաչ անտառիկը»,
ամայացել երկիրը: Բանաստեղծութիւնը աւարտւում է խոհական
մտորումներով.

Ա՛հ, անցուցնաց եղել ամէն.
Ա՛հ, անցուցնաց է Հայաստան.
Զիս անմէկիկ թողած աստէն՝
Հետ անցնիս գնաս դո՛ւն այլ Հրազդան...
Անցի՛ր գընա ջրիկդ հայրենի
Արտսումք հերիք եմ Բարգենի⁹:

«Բա՛մ փորոտան» (1849թ.) բանաստեղծութեան մէջ Ղե-
ւոնդ Ալիշանը բացայայտ կոչ է անում մարտի:

Բա՛մ. փորոտան բարձուստ բոմբիւնք յԱրարատեան դաշտն ի վայր.
Արի արանց արիւնք յեռանդն առատանան ի հրազայր.
Հրաւեր հայրենեաց հրոչակի՛նդ հանուր
Հոգիք Հայկազանց բորբոքին ի հուր¹⁰:

Ղեւոնդ Ալիշանի հոգուն հարազատ է եղել Զորջ Բայրոնի
հերոսը՝ Զայլդ Հարոլդը, որը մեծ հայագէտը թարգմանել է բը-
նագրից. „Lord Byron, Childe Harold’s Pilgrimage“, Իտալիա, Զոր-
բորդ երգի «Պանդխտութիւն Հարոլդայ Ասպետի», թարգմ. Ղե-

⁸ Նուագք Հ. Ղևոնդեայ Մ. Ալիշանեան Միքիթաբեան վարդապետի, Վենե-
տիկ, Ս. Ղազար, 1867, էջ 297:

⁹ Նոյն տեղում, էջ 98:

¹⁰ Նոյն տեղում, էջ 115:

Լոնդ Ալիշանի, Վենետիկ, 1860, այլապէս այդքան գեղեցիկ ձեւով նա չէր կարող թարգմանել այդ երկը: Ընդհակառակը Ղեւոնդ Ալիշանը իր եւ Զորջ Բայրոնի ու նրա հերոսի միջեւ որոշակի բնաւորութեան գծերի եւ հոգեկան կապի նմանութիւն է տեսել, յատկապէս միայնութեան հարցում: Զորջ Բայրոնի հերոսը աշխարհ տեսած մարդ էր, բայց միայնակ կեանքում: Նոյնը Ղեւոնդ Ալիշանն էր: Եւ հէնց այս գծերի համար է, որ նա թարգմանել է այս երկը: Ղեւոնդ Ալիշանը այդ գործին լծուել է Լոնդոնում եղած ժամանակ:

Գրականագէտ Վարդան Փարթամեանը նկատել է, որ Ալիշանը Բայրոնի երկը թարգմանելիս որոշ տողեր կրճատել է, ելնելով իր ժամանակի քաղաքական իրավիճակից՝:

«Բազմավէպում» (1905թ. Մարտ - թիւ 3, էջ 128) տպագրւում է նաեւ Հ. Ղ. Վ. Ալիշանի, Յետին տողք Պայրոնի Ի Միսսոլունկի, Ի Փետրոուարի, 1824, անտիպ բանաստեղծութեան թարգմանութիւնը:

Հայ մեծանուն բանաստեղծ Սմբատ Շահազիզի ստեղծագործութեան վրայ նկատելի է մեծ անգլիացու ազդեցութիւնը: Եթէ Զորջ Բայրոնը գրում էր «Պարապութեան ժամեր», ապա հայ բանաստեղծը՝ Սմբատ Շահազիզը, գրում էր «Ազատութեան ժամեր», Մոսկուա, 1860թ.: 1903թ. (թիւ 4, էջ 167) «Բազմավէպում» Զորջ Բայրոնի մասին գրուել է «Պայրոն անոր մտքի լապտերն կ'արծարծէ»: Ազդեցութիւնը նկատելի է նաեւ Սմբատ Շահազիզի «Լեւոնի վիշտը եւ զանազան բանաստեղծութիւններ» շարքի վրայ: 1903թ. «Բազմավէպի» «Սմբատ Շահազիզ» յօդուածում (հեղ. Հ. Բ. Զրաքեան) բարձր է գնահատւում Սմբատ Շահազիզի ստեղծագործութիւնները եւ ընդգծւում է Բայրոնի «Չայլդ Հարոլդից» կրած ազդեցութիւնը: Սմբատ Շահազիզի հերոսը՝ Լեւոնը, Մոսկուայից վերադառնալով հայրենիք, պայքարում է իր լուսաւորեալ գաղափարների հաճար:

Գրելով բողոքական «Մարտինոս Լուսէրի պատմութիւնը» (երկու յօդուածներում-Հ.Ա.), հեղինակը՝ Հ. Ա. Ճ.-ն նկատի է ունենում Խալիլայի ժողովրդական զանգուածներին. «Կրկնակնունք ըսուած. գազանաբարոյ աղանդաւորները, որ Սուրբ գիրքը մէկ ձեռքերնին՝ թուրը մէկ-ալ ձեռքերնին՝ իրենց տերանցը ու

¹¹ ՎԱՐԴԱՆ ՓԱՐԹԱՄԵԱՆ, Հայ-անգլիական գրական առնչութիւնները, Եր., 1975, էջ 213-214:

թագաւորացը դէմ ելան» (1846, էջ 187): Ընդգծւում է, որ ազատագրական շարժման մասնակիցները «գազանաբարոյ աղանդաւորներ են» եւ եթէ լինէին օրինաւոր մարդիկ, այլապէս չէին դուրս գալ իրենց տէրերի ու թագաւորի դէմ:

Սակայն մի ուրիշ համարում Գաբրիէլ Այվազովսկին «Վեցետիկ փաղափին նոր ազատութիւնը» յօդուածում իր նպաստն է բերում Խտալիայի ազգային-ազատագրական շարժմանը եւ Հռոմի Պիոս 9-րդ պապին ու դատապարտում է Աւստրիայի բռնապետին. «Բայց ո՞վ կրնայ պատմել Խտալիոյ ժողովրդոց ցնծութիւնը. Մեքսիկոյի հիւնար կարծես թէ իրենց ազատութեանը անտիսն էր, այնպէս ամէն տեղ սկսան ոտք ելլել. աստուրիական տէրութեան իշխաններն ալ սասանած՝ ինչ ընկիւիճին չէին գիտեր: Ամէնքն ալ մեծ ու պզտիկ՝ Խտալիոյ եռագոյն դրօշակները բացած (կանանց, ճերմակ ու կարմիր), եւ կամ այն գոյներով ժապաւեցներ ու ծոպեր, դրած կուրծքերուն ու գլխարկներուն վրայ՝ վեր վար կը պտըտէին փողոցներն ու հրապարակները, ուրախակից ըլլալով իրարու եւ կանչելով անդադար. «Կեցցէ՛ Խտալիա, կեցցէ՛ Պիոս Իններորդ, կեցցէ՛ Վեցետիկ» եւ այլն» (1848, էջ 136-137):

Ի հարկէ անկողմնակալ չէր հանդէսի հայեցակարգը այս հարցում: Գաբրիէլ Այվազովսկին Մետերնիխի անկումը համարում է իտալական ազգի համար «ազատութեան անտիսը»: Գաբրիէլ Այվազովսկին այլ կերպ չէր կարող գրել Աւստրիայի բռնապետի՝ կանցլերի հասցէին, քանի որ վերջինս 1815թ. Վիեննայի խորհրդաժողովի ժամանակ գտնուում էր, որ մասնատուած Իտալիան զուտ աշխարհադրական հասկացողութիւն է եւ ո՛չ ազգային պետութիւն: Խօսքն այս դէպքում վերաբերում էր Վենետիկի խնդրին, որը նոյնպէս ընկած էր Աւստրիայի բռնապետական լծի տակ, հալածւում ու կեղեքւում էր նրա կողմից:

Վենետիկի Միլիթարեան սուրբ հայրերը գտնում էին, որ Հռոմն եւ Վենետիկը կարող են ազատագրուել Խտալիայի թագաւորի, իսկ նրան օգնելու էր Պիոս Իններորդ Հռոմի պապը: Սակայն ազատագրական շարժման ընթացքում բացայայտուեց Հռոմի պապի վերաբերմունքը այդ հարցում, երբ 1848թ. իտալական ազատագրական շարժման թե՛ ընթացքում, նա թողեց Հռոմը եւ փախաւ Գաետու, պատսպարուելով յեղափոխականներին:

«Բազմավէպը» տարբեր նիւթերի մէջ յեղափոխութեան վերաբերեալ մի նոր մօտեցում էր հանդէս բերում: Այդ մասին

յանկարծ մի նոր ակնարկ էր արևում, կամ դրանց վերաբերեալ գրեւում էր մի երկտող, որով բացայայտում էր հանդէսի դրական վերաբերմունքն ընդհանրապէս իտալական հարցի նկատմամբ: Հանդէսն այնուամենայնիւ բացասական դիրքորոշում է հանդէս բերում հասարակ մարդկանց «խռովարարներին» նկատմամբ: Նրանց քննադատում է այն բանի համար, քանի որ նրանք հաշուի չէին առնում Աստծոյ կամքը եւ չէին հնազանդւում նրան (նոյն տեղում, 1853, էջ 259):

1848 թ. իտալական ազատագրական շարժումից յետոյ, երբ Իտալիան շարունակում էր մնալ Աւստրիայի տիրապետութեան տակ, «Բազմավէպը» ցաւով էր գրում, որ Վերոնան եւ Մանթուան մնացին նախկին վիճակում, իսկ Ռատեցքի սպարապետն էլ Միլանից հետ քաշուելով ամրացաւ այդ քաղաքներում: «Բայց ինչուան հիմա եղած յաղթութիւններէն ալ կ'իմացուի, որ շատ չդիմանար իտալացւոց բոբրոքեալ համաշխարհական եռանդեանը դէմ, ու Իտալիայ թերակղզին բոլորովին ինքն իշխան կ'ըլլայ» (1848, էջ 141): Պարբերականում տպագրուած այս տողերը բացայայտում են հանդէսի դիրքորոշումը, որ ցանկութիւն ունի Իտալիան տեսնել անկախ եւ ինքնիշխան վիճակում:

1863 թ. «Բազմավէպին» երկու համարներում (յունուար-փետրուար ամիսներ) տպագրւում է «Նապոլէոն Գ.» յօդուածաշարը, ուր բարձր է դնահատում Նապոլէոն Գ-ի ծառայութիւնները իր հայրենեաց համար: Երկրորդ նիւթի աւարտից անմիջապէս յետոյ, միեւնոյն էջի վրայ տպագրւում է «Հանճարեղ գրուած մը Սէն-Մարգ Ժիրարտէնի», որը վերաբերում է «Հռովմայ եւ Իտալիոյ խնդրոյն վրայ»: Այստեղից պարզ երեւում է, որ հանդէսը առանց որեւիցէ խօսք ասելու, տպագրելով Ժիրարտէնի կարծիքը, ինչ որ տեղ համամիտ լինելով յօդուածագրի հետ «հանճարեղ գրուած մը» համարում: Բայց եւ այնպէս դրանից էլ երեւում է հանդէսի համակրանքը Հռոմի՝ Իտալիայի մայրաքաղաք լինելու հանգամանքի հետ: Սէն Ժիրարտէնը լինելով ազգութեամբ Փրանսիացի, ներկայացնում է Հռոմի բարդ վիճակը, որը դեռ չէր դարձել Իտալիայի մայրաքաղաք: «Կ'ըսուի թէ Իտալիա, գրում է Փրանսիացի մտածողը, բացարձակ կերպով կը կարօտի Հռոմվայ. շատ ցաւալի է, որ գործողութիւններն այնպիսի ընթացք մը բռնած ըլլան, որ Իտալիա չկարենայ ինքն իրեն եւ իրմով գոհ ըլլալ» (1863, էջ 64): Սէն Ժիրարտէնը ներկայացնում է, որ Իտալիան իրօք կարիք ունի Հռոմի, բայց միւս կողմից էլ իտալացիները ուզում են Հռոմում վերացնել

Հռոմի պապի իշխանութիւնը: Յիշատակուում է Վիլաֆրանկեան դաշնագիրը, որին անձամբ մասնակից է եղել: Իտալական մեծերը գտնուում էին, որ այդ դաշնագիրը իտալացիները չեն կնքել: Հեղինակը աւարտում է իր միտքը. «...արդ՝ հիմա յօժարութեամբ ուրիշներու կը թողում զանգակ զարնելը» (նոյն տեղում 1863, էջ 64): Ի՞նչն էր նիւթի տպագրութեան իմաստը: «Բազմավէպը» անուղղակիօրէն յայտնում է իր մտածածը, որ անպայման Հռոմը պէտք է ազատագրուի օտարերկրեայ տիրապետութիւնից եւ անցնի Իտալական պետութեան տրամադրութեան տակ: Դա պահանջում են ինչպէս իտալացիները, այնպէս էլ առհասարակ աշխարհի ժողովուրդները: Միխիթարեան հայրերը գլուխում էին, որ Հռոմը պէտք է միաւորուի Իտալիայի հետ խաղաղ հունով, առանց ցնցումների, եւ Ֆրանսիայի հետ ընդհարուելու, որը եւ բխում էր մարդկութեան նպատակայարմարութեան շահերից:

«Բազմավէպի» 1866թ. (հոկտեմբեր ամիս) համարում տպագրուում է «Ազատութիւն Վենետիոյ» յօդուածը, որի հեղինակն է Հ.Մ.Ք.-ն: «Այս դարուս հրաշալի դէպքերէն մէկը կրնայ համարուիլ Վենետիկեան գաւառին Աւստրիացոյն ձեռքէն ազատումը, որ մօտ օրերս եւ մեր աչքին առջեւ պատահեցաւ» (1866, էջ 297): Հանդէսը գտնուում է նաեւ, որ «Եղածը եթէ փիլիսոփայաբար քննեմք, աստուածային տեսչութեան գործ կը համարիմք, քան թէ մարդկային» (նոյն տեղում): Առանց արիւն հեղելու վենետիկեան թուով չորս՝ Մանթուա, Վերոնա, Փէսքիէր, Լէնյակո բերդերը եւ Վենետիկ քաղաքը անցան Իտալիային: Յօդուածագիրը կարծում է, որ այս անգամ Իտալիան պարտական է Պրուսիային, ինչպէս 1848-ին՝ Ֆրանսիային:

Վենետիկի ազատագրման կապակցութեամբ հանդէսը փառաբանելով Վիկտոր-Էմանուէլին, ոգեւորուած գրում էր. «Անկարելի է բերանով պատմել եւ գրչով ստորագրել ինչ որ կ'զգար ժողովուրդը իր սրտին մէջ: Այն օրուան անպատմելի ցնծութիւնը նա միայն կ'զգայ, որ գիտէ եւ կը նանգէ ազգի մը ազատութեան յարգը: Բոլոր քաղաքը ոտքի վերայ էր, տունները եւ հրապարակները զարդարուած դրօշներով եւ դիպակներով, ամենուն աչքը եկող զօրաց վերայ, ականջը երաժշտական քաղցր նուագաց. ամենուն բերանը Իտալական ազատութեան եռանդուն երգեր» (նոյն տեղում, էջ 299):

Վենետիկի Ս. Մարկոսի հրապարակում ամէնուրեք լսուում էր զանգերի ղողանջները եւ թնդանօթների որոտը: Ժողովուրդը

ցնծութեան մէջ էր. «... կը քնդայր, գոր կը հնչէին Վիկտոր-էմմանուէլի, Իտալիոյ միութեան եւ Կարիպալտիին համար: Շատ տարիներէ հետէ չէր տեսած սրբոյն Մարկոսի հրապարակը այսչափ րազմութիւն» (նոյն տեղում): Նոյն հանդէսի համարում շարունակում է տպագրուել «Երգ պատերազմի» բանաստեղծութիւնը, որն արարել է Անճելոյ Պրոֆֆէրիոն, երաժշտութիւնը գրել է Պրիճճին: Բանաստեղծութիւնում արտացոլուել են իտալական 1859-1860թթ. ազգային-ազատագրական զէպքերը, ուր իտալացիները յաղթանակել են Վիկտոր-էմմանուէլի գլխաւորութեամբ: Բաւարոյ աւանի, վերջինս գտնուում էր Պիեմոնտի Ալեքսանդրիա քաղաքի մօտ:

Ի փառաց ցանգ ի շաւիղ
Յիտալական երկիր քաջ,
Սուրբ Մարտինեայ փայլեսցէ
Փայլեսցէ նոր արեգակն:
Թնդանօթից ի բոմբիւն, եւ այլն (նոյն տեղում, էջ 300-301):

Ի՞նչն էր նիւթի տպագրման նպատակը: Յոյց տալու իտալական քաջերի կողմից նոր արեգակի բացուելը՝ նրանց տարած յաղթանակի բերկրանքը: Այստեղից էլ պարզ երեւում է հանդէսի համակրանքը իտալացիների արդար գործի նկատմամբ:

Դանիէլ Մանինը՝ 1848թ. Վենետիկի հանրապետութեան ղեկավարը, վառ անհատականութիւն էր: Դանիէլ Մանինը մահացաւ վտարանդիութեան մէջ՝ Ֆրանսիայում: Դրան է նուիրուել «Բազմամիջպում» (1868 թ. ապրիլ ամիս, թիւ 4) տպագրուած յօդուածը՝ «Դանիէլ Մանինի ոսկրոտեաց փոխադրութեան հանդէսը»: Յօդուածի հեղինակն էր Հ. Դ. Նազարէթեանը, որը ներկայ է գտնուել սգոյ արարողութեանը: Այդ կապակցութեամբ Վենետիկում տեղի ունեցաւ սգոյ մեծ հանդէս, որ Փարիզից Դանիէլ Մանինի դին տեղափոխուում էր Վենետիկ: 1868թ. մարտի 21-ին երեկոյեան, ինչպէս գրում է հանդէսը, «Իտալիոյ նոր անկախ եղած ամենայն գլխաւոր քաղաքները ընդունեցին Վենետիկ մեծ դիկտատորին անիւնը, կողակցին եւ դստերը ոսկերացն հետ մէկտեղ ամփոփելու Վենետիկում» («Բազմամիջպ», 1868, էջ 119):

Սգոյ միտինգում ելոյթներ ունեցան իտալական հասարակական գործիչներ Ան տը Լա Ֆորժը, Ռուֆֆինին, Հերոլտը, Քալուչին, Ռենսովիչը, տը Ֆորքատը, Պարպիրոլին, Վարեն, Միննո-դոն:

Ժամը 2-ին Դանիել Մանինի դագաղը փոխադրում է Ս. Մարկոսի եկեղեցին, որտեղ դրում է բարձր սեղանի վրայ, ուր վառում էր թուով 200 ջահեր: Հոգեհանգստեան արարողութիւնը կատարեց «Ծիրանաւոր պատրիարքը»:

Հեղինակն աւարտելով յօդուածը, իր ցանկութիւնն է յայտնում «... երանի՛ թէ Դանիել Մանինի անմեղապարտ հայրենասէրին անիւնացեալ ոսկրոտիքը՝ որ Քալուրի ՚ի գլուխ հանած միութեան շարժումը կը գուշակէր, հաշտութեան նոր նիւթ մը եւ խաղաղութեան, առ հաւատչեայ ըլլայ իտալացւոց համար» (նոյն տեղում, էջ 123):

Մնում էր Հռոմը՝ «յաւիտենական քաղաքը», որը դեռ չէր միաւորուել իտալիային: Ֆրանսիացի զինուորները իրենց սուրիններով պաշտպանում էին Հռոմի պապին իտալացիներէրից:

Հռոմը ազատագրուեց 1870թ. սեպտեմբերի 20-ին ու դարձաւ միասնական իտալիայի մայրաքաղաք:

«Բագմավէպի» մի այլ համարում հաղորդում է, տպագրւում եւ բացայայտում է իտալիայի ազգային հերոս Զուզեպպէ Գարիբալդիի նկատմամբ հանդէսի յարգալից ու դրական վերաբերմունքը, ուր «Քաղաքական երեւելի անցք 1875 տարւոյն» բաժնում ներկայացւում է իտալացի հերոսի տնտեսական գործերով զբաղմունքը: Չնայած այն բանին, որ Զուզեպպէ Գարիբալդին «փառաւոր ընդունելութիւն կը գտնէ ժողովրդէն», իտալական սենատի անդամ է, նա իր բնակավայր Կապրերայից Հռոմ է հասնում եւ այստեղ բնակութիւն հաստատում «ուր բոլորապէս նուիրուեց ինքը զինքը Տիրերիս գետը կանոնաւորելու խնդրոյն, եւ Հռոմայ շրջակայ անմշակ դաշտերը քարտէկու մտածութեանը» (նոյն տեղում, 1876, էջ 90): Պէտք է նկատել, որ «Բագմավէպի» այս տեսակէտը լիովին կիսում էր Ժամանակի մէկ ուրիշ պարբերական «Մեղու Հայաստանին»:

1887թ. հանդէսում տպագրուած նիւթերից առանձնանում է Վիկտոր-Էմմանուէլ 2-րդի արձանի բացման արարողութիւնը Վենետիկում: Հանդէսում պատկերուած է Վիկտոր-Էմմանուէլի արձանի մեծադիր լուսանկարը: Իտալիոյ թագաւորը նստած է նժոյզին, ձեռքին ունենալով այն սուրը, որով ազատագրեց իր հայրենիքը եւ մասնաւորապէս Վենետիկը՝ աւստրիացիներէրից: Արձանի պատուանդանի վրայ նստած է մի կին, հաւանաբար խորհրդանշի իմաստով: Արձանի հեղինակն է համբաւաւոր Հեկտոր Ֆերրարի քանդակագործ արուեստագէտը: Հանդէսն այս առիթը

բաց չի թողել ներկայացնելու եւ բնութագրելու Իտալիոյ թագաւորին: Յօդուածի հեղինակն է Հ. Գէորգ Պայեանը: Նա այդ մասին գրում է, որ քանդակագործը «Վիկտոր-Էմմանուէլ՝ յոսոյ, նեղութեանց եւ ազատութեան ժամանակն կը բովանդակէ» (նոյն տեղում): Այնուհետեւ շարունակում է նիւթը: «Արձանին կերպարանն կը յիշեցընէ Իտալացոց մտաց, Սալոյա տանն եւ Իտալիոյ՝ փառքն ու պարծանքն: Կը յիշեցընէ եւս Վիկտոր-Էմմանուէլի երեւելի ձեռնտուս եւ խորհրդականս 'ի Մացցինէ ցԳաւուր: Հայրենասիրաց մեծամեծար խումբն՝ որ իրենց գոհիւք եւ դիւցազնական արուքեամբն հանդերձ անկարող եղան զհայրենիս փրկելու, միանալով Վ.-Էմմանուէլի հետ՝ յԱլպեանց ցԱդրիականն ազատ կացուցին գիտալիս, պարգևելով ժողովրդեանն անկախութեան եւ ազգային զգացումն ունեցող գերագոյն բարիք» (նոյն տեղում, 1887, էջ 171-172): Հեղինակը յիշատակում է, որ Վիկտոր-Էմմանուէլը Ս. Մարկոսի հրապարակ է այցելել առաջին անգամ՝ 1866թ., իսկ յետոյ՝ 1878թ.: Այս անգամ էլ այդտեղ են ժամանել նրա մահից յետոյ նրա ժառանգը Իտալիոյ թագաւոր Ումբերտոն եւ նրա կինը՝ թագուհի Մարգարիտը: Վերջիններս ներկայ են գտնուել արձանի բացմանը:

Արձանի բացմանը ներկայ են գտնուել նաեւ Իտալիոյ սենատի անդամ Ֆորնոնին, որը խօսել է «Օգոստոսափառ թագաւորի» անցած կեանքի ուղու մասին, ինչպէս եւ Վենետիկի քաղաքագլուխը: Նա շնորհակալութիւն է յայտնել համբաւաւոր Հեկտոր Ֆերրարային, իր կատարած գործի համար: Թագաւորը՝ Ումբերտոն եւ նրա կինը՝ Մարգարիտը, արձանի բացումը կատարելուց յետոյ ուղեւորուեցին Հռոմ:

Հանդէսում յիշատակում էր Զուգեպպէ Մանձձինիի եւ միւս Իտալական մեծամեծների անունները, սակայն «աշխարհանդէսն», որն նուիրուած էր Վիկտոր-Էմմանուէլի յիշատակին եւ կատարած գործին, բայց այն տարբերութեամբ, որ բոլորից բարձր էր դասում նրան, եթէ Իտալիան չունենար այդպիսի վսեմափայլ թագաւոր, գթուար թէ ազատագրուէր երկիրը: Ի հարկէ հանդէսը եւ նրա խմբագիրն ու յօդուածագիրը կ'ուզենային նման վսեմափայլ թագաւոր ունենալ նաեւ Հայաստանում: Հետեւապէս նիւթի տպագրումը թէ՛ հանդէսի խմբագրի, եւ թէ՛ յօդուածագրի կողմից ինքնանալատակ չի եղել: Այս նիւթի տպագրումը ինքնըստինքեան ունեցել է դաստիարակչական նշանակութիւն: Երիտասարդները պէտք է ոգեւորուէին Վիկտոր-Էմմանուէլի սուրբ գաղափարներով:

Հանդէսում երբեմն տպագրւում էր երաժշտութեանը վերաբերուող նիւթեր: 1907թ. պարբերականում տպագրւում էր «Վէրտի եւ Վակներ» յօդուածը, ուր յօդուածագիրը ցոյց տալով իտալական եւ գերմանական երաժշտական դպրոցների տարբերութիւնը, կրկին անդրադառնում էր Ռիսոջիմենտոյի պատմութեան հարցերին: Այս առիթով «Բազմավէպը» գրում էր. «Վէրտի ո՛չ թէ միայն մեծ երաժիշտ մը եղաւ, այլ մեծ հայրենասէր մը, եւ յիտալական պատմութեան մէջ իւր տեղը ունի Մաճճինիի, Քավուրի, Վիկտոր-Էմմանուէլի եւ Կարիպալտիի քով» (նոյն տեղում, 1907, էջ 548):

Հանդէսն իտալական մեծերին մատնանշելով հայ ժողովրդին աշխատում էր դասեր տալ հետեւելու նրանց օրինակին:

ՀՐԱԶԵԱՅ ԱՍՄԱՐԵԱՆ

The Italian National Liberation Movement in the periodical “Bazmavep”

HRACHYA ASMARYAN

(summary)

The Italian history from the 80th of the 18th century till the 70th of the 19th century is destructive by the heroic struggle of Italians against Austria and the Bourbons for the independence and reunion of the country.

One of the famous writers of Risorgimento is Silvio Pellico (1789-1854). His poem “My jail” was written in the Austrian jail where the Italian patriots were tortured. The monument to Pellico was set up in the town of Saluzzo.

The Mekhitarians wrote about George Byron's biography and published it in “Bazmavep”.

And the whole issue of 1924 was dedicated to the 100th anniversary of great poet's death.

Ghevond Alishan published in the periodical poems, which were written under the influence of the Italian movement. He translated the 4th song of Byron's “Child Harold” named “Italy” and other poems which were published in “Bazmavep”.

In the periodical were also published materials dedicated to Daniel Manini's “Liberty of Venice”, Vittorio Emmanuele, Giuseppe Garibaldi and Giuseppe Verdi.

Through publishing the works of these great Italians, “Bazmavep” tried to make Armenians follow their example.